ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

1. Ի՞նչ է միկրոձեռնարկատիրությունը. 3

2. Ովքե՞ր կարող են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ. 3

3. Ովքե՞ր չեն կարող են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ. 4

4. Անհատ ձեռնարկատերերի և առևտրային կազմակերպությունների կողմից միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու անհրաժեշտ պայմանը. 7

5. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու անհրաժեշտ պայմանը. 7

6. Ի՞նչ ժամկետում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը պետք է ներկայացնի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն. 8

7. Ի՞նչ կարգով և ժամկետում պետք է ներկայացնել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն. 8

8. Ի՞նչ ժամկետում է հարկային մարմինը պատասխանում հայտարարությանը. 8

9. Ի՞նչ արտոնություններ են նախատեսված միկրոձեռնարկատիրության համար. 9

10. Ո՞ր դեպքերում և ո՞ր հարկատեսակի վճարումից չեն ազատվում միկրոձեռնարկատիրության սուբյեկտները. 9

11. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային հաշվարկներ ներկայացնելու կարգը և ժամկետը. 10

12. Ո՞ր պայմաններում է միկրոձեռնարկատիրության սուբյեկտը դադարում այդպիսին համարվելուց. 10

13. Միկրոձեռնարկատիրության համակարգից շրջանառության հարկի համակարգին կամ հարկման ընդհանուր համակարգին անցումը. 12

14. Ապօրինի գործունեությամբ զբաղվելը. 13

15. Օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը. 14

16. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները. 14

17. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը. 15

18. Ո՞ր դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանը կքննարկի հարցը և ո՞վ կարող է դիմել Պաշտպանին. 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված է միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ շատ դեպքերում միկրոձեռնարկատիրության սուբյեկտները տեղեկացված չեն նշված արտոնությունից օգտվելու իրենց իրավունքներին և ընթացակարգին, ինչի արդյունքում հաճախ տուժում են պետական մարմինների վարչարարությունից, կայացրած վարչական ակտերից: Նշվածը խոչընդոտներ է ստեղծում միկրոձեռնարկատիրության զարգացման, փոքր բիզնեսի շահերի պաշտպանության և ազգային տնտեսության մրցունակությունը բարձրացնելու տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմումների և բողոքների ուսումնասիրության արդյունքում Պաշտպանի աշխատակազմը մշակել է սույն ուղեցույցը: Սույն ուղեցույցի նպատակն է բարձրացնել միկրոձեռնարկատիրության սուբյեկտների իրազեկվածությունը միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի արտոնություններից օգտվելիս:

Ուղեցույցում փորձ է արվել ներառել այն հարցերի պատասխանները, որոնք առավել հաճախ են բարձրացվում Պաշտպանին հասցեագրվող դիմումներում ու բողոքներում:

Հարցերի պատասխանները կազմելիս հիմք են ընդունվել համապատասխան իրավական ակտերի կարգավորումները:

Սույն ուղեցույցը կազմելիս հաշվի են առնվել Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված նկատառումները և առաջարկությունները:

1. Ի՞նչ է միկրոձեռնարկատիրությունը.

Միկրոձեռնարկատիրությունը ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական եկամուտ ստանալու նպատակով իրականացվող գործունեություն է:

2. Ովքե՞ր կարող են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ.

1. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որոնց՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 24 միլիոն դրամը:

2. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կարող է համարվել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձը, որի՝ նախորդ հարկային տարվա ընթացքում ստորև նշված գործունեության տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 24 միլիոն դրամը:

	Գործունեության տեսակները
1.	Բնակչության պատվերով կատարվող՝
1)	կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում
2)	հագուստի արտադրություն և նորոգում
3)	գլխարկների արտադրություն և նորոգում
4)	գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում
5)	կահույքի և տան կահավորանքի նորոգում
6)	ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում
7)	համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում
8)	հեծանիվների և անվասայլակների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում
9)	տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն

10)	այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
11)	թիթեղագործական գործունեություն
2.	Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում
3.	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ
4.	Լեզուների ուսուցման դասընթացներ
5.	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ
6.	Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն
7.	Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն
8.	Ստեղծագործական գործունեություն
9.	Խնջույքավարների գործունեություն
10.	Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում
11.	Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար
12.	Դարբնոցային գործունեություն
13.	Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում (այդ թվում՝ այդ ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեությունը)

3. Ովքե՞ր չեն կարող են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ.

1. Ֆինանսավարկային գործունեություն.

Բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ապահովագրական գործակալները, ապահովագրական բրոկերները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, նոտարները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, սաունաների, բաղնիքների և շոգեբաղնիքների կազմակերպման գործունեություն իրականացնողները, աուդիտորական

կազմակերպությունները, առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը:

2. Ծառայություններ.

- Խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, ինժեներական, գովազդային, դիզայներական, մարկետինգային, թարգմանչական, փորձագիտական, փորձաքննական, բժշկական օգնության և սպասարկման, ատամնատեխնիկական, վարսավիրական, մարմնի խնամքի, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման, միջնորդական (այդ թվում՝ անշարժ գույքի առք ու վաճառքի և (կամ) վարձակալության կամ անհատույց օգտագործման տրամադրման) ծառայություններ մատուցողները, ծրագրային ապահովման մշակման, տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման), գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) և շինարարական աշխատանքներ կատարողները, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ իրականացնողները, անշարժ գույքի գնահատման և չափագրման գործունեություն իրականացնողները,

- ինչպես նաև սույն ենթակետում նշված աշխատանքներին կամ ծառայություններին համանման այլ աշխատանքներ կատարողները կամ ծառայություններ մատուցողները[1].

3. Հանրային սնունդ.

Երևան քաղաքի վարչական սահմաններում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները (բացառությամբ զբոսաշրջային տների միջոցով մատուցվող՝ հյուրանոցային ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեության),

4. «Պետական տուրքի մասին» օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեություն.

- Ներքաղաքային երթուղու շահագործման կամ թեթև մարդատար մեքենայով, ներքաղաքային երթուղով ուղևորափոխադրումների կազմակերպում իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ գործունեության այդ տեսակների մասով.

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականի ՀՕ-285-Ն օրենքը (ուժ մեջ մտնելու ժամկետը՝ 01.01.2025 թվական):

- Մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի, ինչպես նաև մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի (բացառությամբ շահումով խաղերի և խաղատների գործունեության) կազմակերպում իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ գործունեության այդ տեսակների մասով.

5. Փոխկապակցված անձինք.

5.1. Փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց փոխկապակցված կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և հայտարարությունը ներկայացնելու օրվանից հետո, իսկ հայտարարությունում գործունեությունը դադարեցնելու այլ օր նշելու դեպքում՝ այդ օրվանից հետո փաստացի գործունեություն չեն իրականացրել.

5.2. Փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցում է 24 միլիոն դրամը:

6. Համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք

7. Իրենց գործունեության ընթացքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքն օգտագործող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք

8. Վարձակալական վճարի, տոկոսի (բացառությամբ սպասարկող բանկում առկա ընթացիկ հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվեգրվող տոկոսի) և (կամ) ռոյալթիի ստացում նախատեսող՝ գործող պայմանագրի՝ վարձակալական վճար, տոկոս և (կամ) ռոյալթի ստացող կողմ հանդիսացող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

4. **Անհատ ձեռնարկատերերի և առևտրային կազմակերպությունների կողմից միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու անհրաժեշտ պայմանը.**

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու համար անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները պետք է հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնեն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, ընդ որում.

- ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը յուրաքանչյուր տարվա համար հայտարարությունը ներկայացնում են մինչև տվյալ տարվա փետրվարի 20-ը,
- հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը հայտարարությունը ներկայացնում է պետական գրանցման/հաշվառման օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը:
- մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերերը հայտարարությունը ներկայացնում է գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը:
- մինչև տվյալ հարկային տարին սկսվելը պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը հայտարարությունը ներկայացնում է կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող մինչև 20-րդ օրը:
- հարկային տարվա ընթացքում պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու համար հայտարարությունը ներկայացնում է կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող մինչև 20-րդ օրը: Ընդ որում, հարկային տարվա ընթացքում պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու դեպքում կարող է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ, եթե անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում՝ մինչև պետական հաշվառումից դուրս գալը, Օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն, չի համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն չի համարվել ԱԱՀ վճարող:

5. **Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու անհրաժեշտ պայմանը.**

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում, եթե հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն:

6. Ի՞նչ ժամկետում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը պետք է ներկայացնի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնում է գործունեության իրականացման որևէ ժամանակահատվածի (հարկային տարվա ընթացքում ընտրված ցանկացած հաշվետու ամսվա կամ մեկից ավելի հաշվետու ամիսների կամ հարկային տարվա կամ հարկային տարիների) համար մինչև տվյալ գործունեության տեսակն իրականացնելը կամ տվյալ գործունեության տեսակը շարունակելը:

7. Ի՞նչ կարգով և ժամկետում պետք է ներկայացնել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի ներքո աշխատելու համար անհրաժեշտ է https://file-online.taxservice.am էլեկտրոնային համակարգի միջոցով լրացնել և հանձնել ՊԵԿ նախագահի 27.08.2019թ. N 558-Ն հրամանի թիվ 1 և թիվ 2 հավելվածներով հաստատված՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն[2]:

Վերջինս հարկավոր է հանձնել գրանցումից հետո 20 օրվա ընթացքում: Հայտարարությունը ներկայացնել պետք է նաև յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից փետրվարի 20-ը ընկած ժամանակահատվածում՝ անկախ նախկինում այդ համակարգում հաշվառված լինելու փաստից:

8. Ի՞նչ ժամկետում է հարկային մարմինը պատասխանում հայտարարությանը.

[2] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187938

Հարկային մարմինը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է իր կողմից սահմանված ձևով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագիր:

9. Ի՞նչ արտոնություններ են նախատեսված միկրոձեռնարկատիրության համար.

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ՝ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ Օրենսգրքով սահմանված դեպքերի):

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ֆիզիկական անձինք.*

-Չեն հանդիսանում հարկային գործակալներ և հարկային հաշիվներ դուրս չեն գրում,

-Միկրոձեռնարկատիրության գործունեության տեսակների մասով հարկային մարմիններ օրենքով սահմանված հաշվետվություններ (հաշվարկներ, հայտարարագրեր, տեղեկություններ) չեն ներկայացնում,

10. Ո՞ր դեպքերում և ո՞ր հարկատեսակի վճարումից չեն ազատվում միկրոձեռնարկատիրության սուբյեկտները.

1) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) ապրանքների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից.

2) Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից Օրենսգրքով սահմանված կարգով եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից[3].

[3] Եկամտային հարկը վերաբերում է ոչ թե ձեռնարկատիրական գործունեությանը, այլ այդ բնագավառում ներգրավված աշխատողներին: Տնտեսվարողը, որպես հարկային գործակալ,

3) Օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկի, բնապահպանական հարկի և (կամ) ճանապարհային հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից[4]:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *Միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողի համար, որպես հարկային գործակալ, սոցիալական վճարները և դրոշմանիշային վճարները հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված կարգով:*

11. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային հաշվարկներ ներկայացնելու կարգը և ժամկետը.

1. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը հարկային մարմին են ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության վերաբերյալ մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա փետրվարի 1-ը ներառյալ:

2. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի հաշվարկ վարձու աշխատողների համար մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

3. Օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկ վճարող համարվելու դեպքում՝ հարկային մարմին է ներկայացվում՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

12. Ո՞ր պայմաններում է միկրոձեռնարկատիրության սուբյեկտը դադարում այդպիսին համարվելուց.

պարտավոր է հաշվարկել և վճարել իր աշխատողների եկամտային հարկը: Նշված կանոնը կիրառվում է 2023 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկման ենթակա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով (միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողների մսով եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով՝ նախկինում գործող 5000 դրամի փոխարեն), ինչպես նաև 2023 թվականի հուլիսի 1-ից հետո վճարված՝ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ չհամարվող եկամուտների մասով:

[4] Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների տեսակները և հարկի չափերը սահմանվում են Հարկային օրենսգրքի 87-րդ և 88-րդ հոդվածներով:

1) Կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը դադարում է միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց, եթե՝

-հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը կամ

-հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն՝ այդ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

-ընթացիկ հարկային տարում կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 24 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

2) Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը դադարում է միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց, եթե Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 24 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

3) Միկրոձեռնարկատիրության սուբյեկտը դադարում է այդպիսին համարվելուց, եթե՝

-տեղի է ունեցել սույն Ուղեցույցի 3-րդ կետի 1-3-րդ, 5.1-րդ, 6-րդ, 7-րդ կամ 8-րդ ենթակետերում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

- տեղի է ունեցել սույն Ուղեցույցի 3-րդ կետի 5.2-րդ կետում նշված փաստը՝ այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից, իսկ եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է ավելի ուշ, ապա պետական գրանցման կամ հաշվառման օրվանից: Առևտրային կազմակերպություններին և ֆիզիկական անձանց փոխկապակցված ճանաչելու մասին հարկային մարմնի ղեկավարի որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք շարունակում են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ, իսկ հիշյալ որոշումն անվավեր չճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք դադարում են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ սույն

կետով սահմանված ժամկետից:

13. Միկրոձեռնարկատիրության համակարգից շրջանառության հարկի համակարգին կամ հարկման ընդհանուր համակարգին անցումը.

1. Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից՝

1) շրջանառության հարկի համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում (բացառությամբ Օրենսգրքով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի) հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են Օրենսգրքի 55-րդ գլխով սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով.

2) հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են Օրենսգրքով սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով:

2. Միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու ժամանակահատվածում կատարված՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ձեռք բերելու ծախսերը՝ Օրենսգրքով սահմանված կարգով: Սույն մասի կիրառության իմաստով՝ միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում՝

1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշելու համար հաշվի են առնվում միկրոձեռնարկատիրության համակարգում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումները.

2) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

3) Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված և միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան վերաբերող՝ վարչական, իրացման, ոչ

արտադրական բնույթի այլ, ինչպես նաև ֆինանսական ծախսերը (այն մասով, որը, նույն մասի համաձայն, նվազեցվում է այն հարկային տարվա ընթացքում, որին այն վերաբերում է) համախառն եկամտից նվազեցվում են միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրվանից մինչև այդ օրն ընդգրկող ամսվա վերջը եղած օրերի՝ տվյալ ամսվա բոլոր օրերի կառուցվածքում ունեցած տեսակարար կշռին համապատասխանող չափով:

3. Միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու ժամանակահատվածում կատարված՝ սույն կետի 2-րդ մասում չնշված ակտիվների սկզբնական արժեքները՝ Օրենսգրքով սահմանված կարգով:

14. Ապօրինի գործունեությամբ զբաղվելը.

Ապօրինի գործունեություն է համարվում առանց օրենքով սահմանված պետական գրանցման (հաշվառման) կամ առանց հարկային մարմնում հաշվառման ձեռնարկատիրական գործունեության (բացառությամբ օրենքով արգելված գործունեության) իրականացումը:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ապօրինի գործունեության հայտնաբերման դեպքում, բացառությամբ անշարժ գույքը վարձակալության հանձնելու դեպքի, գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ձեռնարկատիրական եկամտի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 200 հազար դրամից:

Նշված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում խախտման կրկնակի և հետագա (անկախ իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակից) փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված ձեռնարկատիրական եկամտի 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից:

Ապօրինի գործունեություն իրականացնողի ձեռնարկատիրական եկամտի որոշման անհնարինության դեպքում ձեռնարկատիրական եկամուտը որոշում է հարկային մարմինը՝ կիրառելով անուղղակի եղանակներով հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատման համար Օրենսգրքով սահմանված կարգը:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: Նշվածը չի կիրառվում՝

1) սահմանված կարգով հաշվառված և արտոնագիր ստացած՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ գործունեության այդ մասով.

2) անմիջականորեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ և իրացմամբ զբաղվող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ գործունեության այդ մասով, ինչպես նաև այն ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունն օրենքով սահմանված կարգով կարող է իրականացվել առանց պետական հաշվառման՝ գործունեության այդ մասով.

3) Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի և Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության նկատմամբ՝ այդ մշտական հաստատությանը վերագրվող գործունեության մասով:

15. Օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը.

1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից գաղտնի և բացահայտ մեթոդների ու միջոցների կիրառմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստումը, իրականացումը և արդյունքների ամրագրումն ու իրացումն է:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ամբողջ ծավալով իրականացվում են ինչպես օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից իրենց վերապահված հիմնական խնդիրների իրականացման շրջանակներում, որպես ինքնուրույն գործունեություն, այնպես էլ նախաձեռնված քրեական վարույթի իրականացվող հետաքննության շրջանակներում որպես օժանդակող գործունեություն:

16. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները.

Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումները.

1) օպերատիվ հարցում.

2) օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում.

3) համեմատական հետազոտումների նմուշների հավաքում.

4) հսկիչ գնում.

5) վերահսկելի մատակարարում և գնում.

6) իրերի և փաստաթղթերի հետազոտում.

7) արտաքին դիտում.

8) ներքին դիտում.

9) անձի նույնացում.

10) շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում.

11) նամակագրության, և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում.

12) թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում.

13) օպերատիվ ներդրում.

14) օպերատիվ փորձարարություն.

15) ֆինանսական գործարքների վերահսկում.

16) կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումները սահմանվում են միայն օրենքով:

17. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը.

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն՝

1)օպերատիվ-հետախուզական այն միջոցառումը (միջոցառումները), որ (որոնք) նախատեսվում է (են) անցկացնել.

2)օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ միջոցառումների անցկացման հիմքերը.

3) տվյալ տեսակի միջոցառումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները.

4)այն տեղեկատվությունը, նյութերը կամ փաստաթղթերը, որոնք նախատեսվում են ստանալ դրա արդյունքում.

5)միջոցառման կամ միջոցառումների անցկացման տեղը, սկիզբը և ավարտը:

6)որոշումը կայացրած օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը և պաշտոնը,

7)թե այդ միջոցառումն ում վրա է տարածվում,

8)որոշում կատարելու համար իրավասու օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի անունը, ազգանունը և պաշտոնը:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինն իրավունք չունի իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված

չեն օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու մասին որոշմամբ:

3.Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում այն անձի վերաբերյալ, ում նկատմամբ այդ միջոցառումներն իրականացվում են, ձեռք են բերվել տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ միջոցառումներն անցկացնելու մասին որոշմամբ, ապա դրանք չեն կարող օգտագործվել և ենթակա են ոչնչացման, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1)օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները գործել են բարեխղճորեն, և

2)ստացված տեղեկությունները պարունակում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կամ դրա նախապատրաստման վերաբերյալ տեղեկություններ կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործընթաց սկսելու կամ սկսված վարույթին առերևույթ առնչվող տվյալներ, և

3)այդ տեղեկությունների ձեռքբերման համար սույն օրենքով թույլատրվում է իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը: Սույն մասով նախատեսված տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն:

Ի գիտություն: *Խախտումներ հայտնաբերելու նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում հարկ վճարողի պահանջով հարկային մարմնի պաշտոնատար անձը ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին որոշման քաղվածքը:*

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում Օրենսգրքով սահմանված կարգով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող հարկ վճարողների կողմից ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման համար Օրենսգրքով սահմանված պահանջների խախտման՝ Օրենսգրքով սահմանված պահանջները չբավարարող ուղեկցող փաստաթղթով կամ առանց ուղեկցող փաստաթղթի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության հայտնաբերման դեպքում կիրառվում է նախազգուշացում, իսկ նախազգուշացումը կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասով սահմանված երկրորդ փաստ արձանագրվելու դեպքում վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

18. Ո՞ր դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանը կքննարկի հարցը և ո՞վ կարող է դիմել Պաշտպանին.

Պաշտպանը բողոքի առկայության դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ քննարկում է՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումները.

2) հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը, եթե տեղեկություն կա մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական միջոցները. (...):

Բողոքը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվում է գրավոր կամ բանավոր կարգով: Գրավոր կարգով ներկայացվող բողոքները քաղաքացին անձամբ կարող է ներկայացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (ք. Երևան, Պուշկինի 56ա), ուղարկել փոստային ծառայության միջոցով, էլեկտրոնային փոստով (ombuds@ombuds.am) կամ առցանց՝ Պաշտպանի պաշտոնական կայքէջի միջոցով:

Բանավոր՝ Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցչին անձամբ հայտնելով կամ թեժ գիծ (116, (096) 116-100) հեռախոսահամարներին զանգահարելով:

Բողոքի համար որևէ հատուկ ձև սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմողի անուն-ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը, գտնվելու վայրը:

Բողոքում պետք է նշվեն նաև մարդու խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները: Եթե դիմողն ունի գործի պարզաբանման և լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ապա դրանք կարող են կցվել բողոքին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմելու կամ բողոք հասցեագրելու համար որևէ վճար կամ պետական տուրք նախատեսված չէ:

Ի գիտություն: *ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքի «Այլ հրապարակումներ» բաժնում (https://src.am/am/showPublicationPage/2008) տեղադրված է միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի վերաբերյալ երկու իրազեկման թերթիկ: Իրազեկման թերթիկներում ներկայացված են միկրոձեռնարկատիրության համակարգին առնչվող առանձին հարցերի վերաբերյալ իրազեկումներ՝ 1) ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար, 2) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար: Օրենսդրական փոփոխություններին զուգընթաց իրազեկման թերթիկները թարմացվում են՝ ապահովելով միկրոձեռնարկատիրության սուբյեկտների իրազեկվածությունը նշած համակարգում տեղի ունեցող փոփոխություններին:*

ԹԵԺ ԳԻԾ՝

116